ԵՐՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-996[5]-13.10.2016-ՄԻ-010/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

««ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով՝

«3.1. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պետական ծառայողներին դասային աստիճանի համար հավելավճար է տրվում սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:».

2) 5-րդ մասից հանել «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում պետական ծառայողին,» բառերը:

Հոդված 2. Օրենքի հավելված 1-ի աղյուսակում «ՀՀ նախարարի տեղակալ» տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ.

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտի ղեկավար	8.50

Հոդված 3. Օրենքի հավելված 2-ի աղյուսակում՝

1) «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ» տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ.

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգող	6.00

2) «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի խորհրդական» տողում «4.75» թիվը փոխարինել «5.5» թվով.

3) «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի խորհրդական» տողից հետո լրացնել նոր տող հետևյալ բովանդակությամբ.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մարզային ստորաբաժանման ղեկավար	4.55

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մարտի 1-ից: